The analyzed earthquakes have a variety of focal mechanisms, and the fault planes of those events have different compression and dilatation distributions. Analysis of focal mechanism distribution indicates that the stress status of the crust varies across the study area.

The focal mechanism solutions of these events demonstrate the present-day tectonic activity in this area. The distributions of the different mechanisms vary between strike-slip, normal, and thrust, but are mainly thrust (fig.1). 16 events give pure normal faults and normal faults with minor strike-slip component, with the fault planes trending NE-SW. These events primarily occurred in the north-eastern part of the study area, concentrated within the territory of Javakheti ridge.




Figure 1. Fault plane solutions of the selected 58 earthquakes that occurred in the study area between 2005 and 2017, with $M \geq 3.0$

26 events are characterized by thrust fault mechanisms, which are related to the active faulting in the study area. The P compression axes coincide with the general compression direction of the Caucasus region (trending from NE to SW). 16 events are associated with strike-slip (SS) faults, trending primarily N-S.

Distribution of types of mechanisms can be seen in dip angles based ternary diagram (fig.2).




Figure 2. Ternary diagram of 58 earthquakes that occurred in the study area between 2005-2017

Triangle diagrams are simply a quantitative graphical method for using the dip angles of T, B and P axes (δ_T , δ_B and δ_P) for displaying focal mechanisms.

It is possible to plot a unique point representing the orientation of the T, B, and P axes because any three mutually perpendicular vectors having dip angles δ_T , δ_B and δ_P satisfy the identity

$$\sin^2 \delta_T + \sin^2 \delta_B + \sin^2 \delta_P = 1$$

If we define $x = \sin \delta_T$, $y = \sin \delta_B$, and $z = \sin \delta_P$, this identity is just the equation of the sphere $x^2 + y^2 + z^2 = 1$. Since all the angles are between 0 and 90°, at the vertices of the triangle the dip angles are 90°. The vertices of the triangle represent earthquakes with vertical T axes (thrust mechanisms), vertical B axes (strike slip), and vertical P axes (normal) (Froehlich C., 1992).





Figure 3. Focal mechanism data represented as P, T axes. Arrows indicate the tectonic regime. Inset figures show the rose diagrams of P and T axes orientations.

The focal mechanism orientations are shown by three stress axes, P, B, and T (AZ, Pl.), that are perpendicular to one another. The P- and T-axes orientations are classified according to the tectonic regime assignment proposed by Zoback, using the plunges of these axes (Zoback et al., 1980). Kinematic Compression (P) and Dilatation (T) axes directions, represented in (fig.3), indicate dominant sub-meridian directions for P axes, and sub-horizontal directions for T axes. According to the orientations of the P- and T-axes, the region experiences NE-SW compression, and NW-SE tension.

Focal mechanisms of earthquakes are the primary data used for investigating the regional tectonic stress field. Therefore, to evaluate the orientation of the stress responsible for the earthquake events, a fault-slip data inversion was performed using nodal planes and slip vectors determined from the focal mechanism solutions.

In order to analyze the stress variations throughout the region, stress tensor calculation are performed for three subgroups, which are defined based on location (fig.4; a,b,c).






Figure 4. Stress Regimes determined for the three subgroups in the study area.

The first subgroup includes the eastern part of the Javakheti Highland. Here, a strike-slip tectonic regime is observed in the territory of Javakheti Ridge area. This subgroup has the greatest number of earthquakes characterized by strike-slip and normal faulting tectonic movement (σ_1 (NE-SW), σ_3 (NW-SE)) consistent with the strike-slip regime of the region (fig.4a).

The northwestern part of the study area has mainly thrust fault types of focal mechanisms, which are related to the N-S-trending parallel faults. The maximum principal stress orientations are found as (σ_1 (NE-SW), σ_3 (NW-SE)), consistent with the thrust regime of the region (fig.4b).

The third subgroup includes earthquakes located in the southern part of the study area. These events, distributed along the north-western segment of the Pambak-Sevan-Syunik active fault, are mostly of the thrust focal mechanism type movement (σ_1 (NW-SE), σ_3 (NE-SW)), consistent with the thrust regime of the region (fig.4c).

Thus, a strike-slip stress regime is observed in the eastern part of the Javakheti Highland, which is characterized by NE-SW compressional and NW-SE dilatational zones. In the study area's northwestern part, which includes the Javakheti fault zone, a thrust stress regime with a radial compressional field is observed. It coincides with a fault kinematics of this area. As for the southern part of the study area, a thrust stress regime with a radial compressional field is also observed, which is characteristic of the local kinematic features.

CONCLUSIONS

- Analysis of the distribution of focal mechanisms demonstrates the present-day tectonic activity in the study area. The solutions of the different mechanisms vary between strike-slip, thrust, and normal, but are mainly thrust. Normal faults with minor strike-slip components have fault planes trending in the NE-SW direction. The events characterized by thrust fault mechanisms are related to the zone of active faulting within the study area, trending NE-SW, and the strike slip (SS) faults primarily trend in the N-S direction.
- The events characterized by strike-slip faulting mechanisms largely occurred in the north-eastern part of the study area, along both sides of the Javakheti Ridge, where there are supposed faults. Note that the events with normal faulting mechanisms are concentrated within the Javakheti Ridge area. This indicates that strike-slip mechanisms can be linked to the supposed faulting activity, while normal faulting mechanisms can be linked to the volcanic activity in the Javakheti Ridge area.
- The kinematic Compression (P) and Dilatation (T) axes of fault planes have been determined to be dominant sub-meridian directions for P axes, and sub-horizontal directions for T axes. According to the orientations of P- and T-axes, the region experiences NE-SW compression, and NW-SE tension.
- Stress regimes were determined for the Javakheti Volcanic Highland. The northeastern part of the study area is characterized as a strike-slip stress regime (σ_1 - NE-SW; σ_3 -NW-SE). The northwestern part of the study area, which includes the Javakheti fault zone, a thrust stress

regime with a radial compressional field is observed (σ_1 -NE-SW; σ_3 -NW-SE). It coincides with a fault kinematics of this area. The southern part of the study area, a thrust stress regime with a radial compressional field is also observed (σ_1 -NW-SE; σ_3 -NE-SW), which is characteristic of the local kinematic features.

The parameters of the earthquakes focal mechanism solutions are presented in the table below

N ₀	Date	Time	Lat. N (°)	Long. E (°)	M _L	Depth (km)	Strike (°)	Dip (°)	Rake (°)	P Az. (°)	P Pl. (°)	T Az. (°)	T Pl. (°)	SH Max Azim	SH Min Azim	Regime Code	Regime Index
1	16.12.2005	04:02:28	41.16	43.85	4.3	12	270.8	43.6	47.99	209	08	104	61	26	116	2.5	TF
2	24.05.2006	03:17:19	41.08	44.11	3.7	08	107	77	-116	347	51	201	27	140	50	0.5	NF
3	28.12.2006	22:52:19	41.28	43.84	3.6	12	36	75	18	168	01	259	23	168	78	1.5	SS
4	24.07.2007	19:31:23	41.24	43.74	4.1	05	326	54	113	040	06	292	70	38	128	2.5	TF
5	09.07.2007	09:33:08	41.09	43.88	4.0	10	123	42	91	032	03	203	87	32	122	2.5	TF
6	18.06.2008	11:04:31	41.33	44.16	3.7	07	355	37	-100	127	79	272	09	1	91	0.5	NF
7	05.05.2010	14:58:22	41.38	43.89	3.5	11	197	60	179	058	20	157	22	62	152	1.5	SS
8	27.09.2011	08:58:53	41.36	43.99	4.4	12	156	73	164.6	023	02	113	22	23	113	1.5	SS
9	23.07.2011	02:49:24	41.36	43.54	3.6	08	34	24	65	323	22	169	65	138	48	2.5	TF
10	06.09.2011	00:35:44	41.37	44.04	3.5	16	256	88	33	026	21	126	24	21	121	1.5	SS
11	22.02.2011	01:24:37	41.36	43.87	3.5	15	40	65	20	352	05	259	31	171	81	1.5	SS
12	11.12.2011	14:26:34	41.35	43.71	3.4	12	2	64	93.9	089	19	280	71	88	178	2.5	TF
13	20.05.2012	23:07:26	41.00	43.93	3.5	18	198	51	104	278	05	164	78	97	7	2.5	NF
14	05.03.2012	11:12:50	41.11	43.88	3.4	09	124	38	82	040	07	255	81	39	129	2.5	TF
15	06.09.2013	16:35:26	41.36	43.84	3.8	10	120	34	76	040	12	255	76	38	128	2.5	TF
16	25.10.2013	23:45:01	41.44	44.04	3.5	08	62	70.7	50	180	17	289	48	6	96	2.5	NS
17	08.08.2013	06:20:27	41.28	44.04	3.5	05	137	72	164	004	01	095	23	4	94	1.5	SS
18	18.10.2013	18:57:18	40.83	43.97	3.2	10	236	49	86	329	04	112	85	149	59	2.5	TF
19	08.08.2013	06:38:38	41.23	44.02	3.2	15	136	76	167.6	002	01	093	19	2	92	1.5	SS
20	17.10.2013	15:04:46	40.95	43.98	3.3	08	233	44	83	148	01	047	85	148	58	2.5	TF
21	25.01.2013	20:56:43	40.97	43.89	3.3	12	227	40	73	149	06	030	77	148	58	2.5	TF
22	07.09.2013	00:34:49	41.39	43.86	3.0	15	358	49	93	086	04	298	85	86	176	2.5	NF
23	05.06.2013	16:12:52	41.18	43.89	3.1	15	116	27	78	035	19	232	71	33	123	2.5	TF
24	26.05.2014	10:57:44	41.08	44.13	4.0	13	100	80	-116	347	51	218	27	140	50	0.5	TF
25	09.03.2014	11:31:34	41.49	43.63	3.5	16	157	75	159	206	03	114	25	25	115	1.5	SS
26	25.08.2014	22:11:28	41.20	43.78	3.2	18	325.5	52.5	115	038	05	296	69	36	126	2.5	TF
27	08.11.2014	08:04:43	41.41	43.87	3.0	05	358	59	90	088	14	268	76	88	178	2.5	NF

28	14.04.2014	00:02:53	41.43	43.93	3.0	05	306	43	146.4	179	15	288	52	5	95	2.5	NS
29	16.03.2014	14:28:51	41.37	43.96	3.0	10	353	71	90.6	082	26	264	64	81	171	2.5	NF
30	24.03.2015	16:00:53	41.08	43.89	3.9	12	87	71	85	180	26	350	64	3	93	2.5	TF
31	25.05.2015	23:49:04	41.30	43.97	3.6	05	357	71	75	099	25	245	61	107	17	2.5	TF
32	08.01.2015	21:39:42	41.18	43.76	3.5	05	325	61.8	113.4	039	14	278	65	34	124	2.5	TF
33	18.07.2015	17:14:17	41.26	43.92	3.3	09	155	68	26	285	01	015	33	105	15	1.5	SS
34	27.10.2015	16:18:26	41.41	43.95	3.2	12	196	57	36	141	02	049	48	140	50	2.5	NS
35	19.04.2015	03:41:47	40.92	44.30	3.0	12	165	38	35	112	18	356	54	105	15	2.5	NF
36	12.07.2016	10:14:03	41.37	44.04	4.8	18	350.9	89.2	-161	217	13	125	12	36	126	1.5	SS
37	21.07.2016	15:17:45	41.36	44.01	4.3	10	173	69	149	226	05	132	37	44	134	1.5	SS
38	19.10.2016	03:17:56	41.36	44.04	3.7	12	172	62	18	125	08	030	32	123	33	1.5	SS
39	17.10.2016	08:11:01	41.39	44.03	3.7	20	198	74	-55	146	49	262	21	164	74	0.5	TF
40	15.08.2016	17:41:21	41.13	43.92	3.6	10	106	20	72	030	26	225	63	25	115	2.5	TF
41	13.07.2016	15:34:43	41.34	43.58	3.6	10	10	26	89	281	19	102	71	101	11	2.5	TF
42	12.07.2016	10:16:01	41.36	44.03	3.5	14	11	89	-164	236	12	144	11	55	145	1.5	SS
43	13.07.2016	03:17:16	41.38	44.04	3.4	15	161	55	170	024	18	125	30	29	119	1.5	SS
44	05.01.2016	12:24:09	41.43	43.89	3.4	10	170	25	83	085	20	275	70	84	174	2.5	NF
45	24.03.2016	03:54:09	40.93	44.38	3.2	10	252	39	9	215	28	099	38	24	114	2.5	TF
46	02.03.2016	03:43:55	41.41	43.95	3.2	08	97	71.7	137.4	155	14	052	42	150	60	1.5	NS
47	16.03.2106	21:02:10	40.99	44.44	3.1	10	147	76.4	124.7	211	23	093	47	22	112	2.5	TF
48	04.08.2016	11:26:40	41.36	44.02	3.1	12	274	71	162	142	01	232	26	142	52	1.5	SS
49	04.08.2016	21:07:03	41.40	44.03	3.0	10	14	71	21	145	03	236	24	146	56	1.5	SS
50	24.03.2017	01:24:01	41.47	43.93	3.7	05	315	47	156	183	16	289	44	9	99	2.5	TF
51	24.03.2017	01:30:35	41.48	43.94	3.0	05	321	39	156	187	21	302	47	15	105	2.5	TF
52	18.04.2017	06:49:34	40.99	44.14	3.1	19	314	35	153	181	23	302	50	10	100	2.5	TF
53	18.04.2017	08:28:59	41.40	44.08	3.0	09	348	43	101	250	03	358	82	70	160	2.5	NF
54	09.05.2017	06:32:43	41.32	43.91	3.1	08	1	58	64	110	10	223	66	113	23	2.5	NF
55	09.05.2017	11:07:24	41.26	43.98	3.6	10	20.8	51	69.9	125	04	230	74	126	36	2.5	NF
56	04.07.2017	06:21:11	40.93	43.94	3.7	05	350	18	71	275	28	109	62	90	0	2.5	TF
57	15.08.2017	05:12:01	40.93	43.92	3.2	08	349	42	65	276	06	168	73	94	4	2.5	TF
58	11.01.2017	19:29:01	41.37	43.95	3.2	12	11.6	59.5	95.9	098	15	298	74	96	006	2.5	NF

REFERENCE

- Balassanian S., T. Ashirov, T. Chelidze A., Gassanov N., Kondorskaya G., Molchan...and M. Stucchi**, 1999, "Seismic hazard assessment for the Caucasus test area", *Ann. Geofis.*, 42(6), p.1139-1164.
- Davtyan V.** 2007, "Active faults of Armenia: slip rate estimation by GPS, paleo seismological and morph structural data". PhD Thesis, Montpellier II University, France.

- Delvaux D., Moeys R., Stapel G. et al.** 1997b, "Paleo stress reconstructions and geodynamics of the Baikal region, Central Asia. Part II: Cenozoic tectonic stress and fault kinematics". *Tectonophysics*, 282(1-4), p.1-38.
- Delvaux D. and Sperner B.** 2003, "New aspects of tectonic stress inversion with reference to the TENSOR program" *NIEUWLAND, New Insights into Structural Interpretation and Modelling*, Geological Society, London, Special Publications, 212, p.75-100.
- Duff R. E. and Peterson F. I.** 1980, Shock precursor observations, Precursor transition in dynamical systems undergoing period doubling, *J. App. Phys.*, 51, 7; p.3957–3959.
- Froehlich C.** 1992, "Tringle diagrams ternary graphs to display similarity and diversity of earthquake focal mechanisms" *Phys Earth Planet Inter*, 75; p.193-198
- Karakhanyan A., Avagyan A., Avanesyan M., Elashvili M., Godoladze T., Javakhishvili Z., Korzhenkov A., Philip S., and Vergino E.** 2012, Armenia-to-Georgia trans-boundary fault: An example of international cooperation in the Caucasus: San Francisco, California, American Geophysical Union, Fall Meeting supplement, abstract S43J-02.
- Karakhanyan A., Vernant P., Doerflinger E., Avagyan A., Philip H., Aslanyan R., Champollion C., Arakelyan S., Collard P., Baghdasaryan H., Peyret M., Davtyan V., Calais E. and Masson F.** 2013, GPS constraints on continental deformation in the Armenian region and Lesser Caucasus: *Tectonophysics*, v. 592, doi:10.1016/j.tecto. 02.002; p. 39–45.
- Karakhanyan A., Arakelyan A., Avagyan A. and Sadoyan T.** 2016, "Aspects of the seismotectonics of Armenia: New data and reanalysis", in Sorkhabi, R., ed., *Tectonic Evolution, Collision, and Seismicity of Southwest Asia: In Honor of Manuel Berberian's Forty-Five Years of Research Contributions: Geological Society of America Special Paper 525*;
- Lander A.V.**, 2004, The FA2002 program system to determine the focal mechanisms of earthquakes in Kamchatka, the Commander Islands and the Northern Kuriles. Report KEMSD GS RAS, Petropavlovsk-Kamchatsky, 250 pages.
- Lebedev V.A., Chernyshev I.V., Dudaori O.Z., Arakelyants M.M., Bairova, E.D., Gol'tsman Yu. V., Chugayev A.V., Vashakidze G.T.** 2003, "The Samsari Volcanic Center as an Example of Recent Volcanism in the Lesser Caucasus: K-Ar Geochronological and Sr-Nd Isotopic data". *Dokl. Earth Sci.* 393A, p.1323-1328.
- Nomade S., Scao V., Guillou H., Messenger E., Mgeladze A., Voinchet P., Renne P.R., Courtin-Nomade A., Bardintzeff J.M., Ferring R., Lordkipanidze D.** 2015, "New-40Ar/39Ar, unspiked K/Ar and geochemical constraints on the Pleistocene magmatism of the Samtskhe-Javakheti highlands (Republic of Georgia)", *Quaternary International*, p.1-15.
- Philip H., Avagyan A., Karakhanyan A., Ritz J.-F. and Rebai S.**, 2001, "Slip rates and recurrence intervals of strong earthquakes along the Pambak- Sevan-Sunik Fault (Armenia)": *Tectonophysics*, v. 343, no. 3–4, p.205–232.
- Reilinger R., McClusky S., Vernant P., Lawrence S., Ergintav S., Cakmak R., Ozener H., Kadirov F., Guliev I., Stepanyan R., Nadariya M., Hahubia G., Mahmoud S., Sakr K., Abdullah ArRajehi, Paradissis D., Al- Aydrus A., Prilepin M., Guseva T., Evren E., Dmitrotsa A., Filikov S.V., Gomez F., Al-Ghazzi R. and Karam G.** 2006, "GPS constraints on continental deformation in the Africa-Arabia-Eurasia continental collision zone and implications for the dynamics of plate interactions": *Journal of Geophysical Research—Solid Earth*, v. 111, no. B5, p.1–26, doi:10.1029/2005JB004051
- Zoback M.L., Zoback M.D.** 1980, State of stress in the Conterminous United States. *J. Geophys. Res.*, 85; p. 6113-6156.
- Введенская А.В., Балакина Л.М.** 1960, Методика и результаты определения напряжений, действующих в очагах землетрясений Прибайкалья и Монголии // Бюлл. Совета по сейсмологии. № 10. с.73-84.

Reviewer A.Araqelyan

**ՋԱՎԱԽՔԻ ՀՐԱԲԽԱՅԻՆ ԲԱՐՁՐԱՎԱՆԴԱԿԻ ԼԱՐՎԱԾԱՅԻՆ ԴԱՇՏԻ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԿՐԱԶԱՐԺԵՐԻ ՖՈԿԱԼ
ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ 2005-2017ԹԹ.
ԺԱՄԱՆԱԿԱՇՐՁԱՆԻ ՀԱՄԱՐ**

Է.Է.Սահակյան

Ամփոփում

Աշխատանքում իրականացվել է Ջավախքի հրաբխային բարձրավանդակում 2005-2017 թթ. ընթացքում գրանցված երկրաշարժերի ֆոկալ մեխանիզմների հաշվարկ: Օգտագործվել են Հայաստանի, Վրաստանի, ինչպես նաև հարակից մյուս սեյսմիկ կայանների կողմից գրանցված երկրաշարժերի թվային ալիքային պատկերները: Ֆոկալ մեխանիզմները հաշվարկվել են P ալիքի առաջին մուտքի նշանի մեթոդի կիրառմամբ: Լուծումները տրվել են P ալիքի բևեռացման, սեյսմիկ կայանի նկատմամբ ազիմուտային անկյան, ինչպես նաև ալիքի անկման անկյան տվյալների հիման վրա: Այն երկրաշարժերը, որոնց համար հաշվարկվել են ֆոկալ մեխանիզմները, իրականացվել է նաև էպիկենտրոնների և հիպոկենտրոնների վերահաշվարկ (re-location):

Ուսումնասիրվող գոտու լարվածային ռեժիմի գնահատման համար օգտագործվել են վերոնշյալ երկրաշարժերի խզման հարթությունների լուծումները:

Ջավախքի բարձրավանդակում երկրաշարժերը բնութագրվում են շարժման տարբեր տիպի կինեմատիկաներով (կողաշարժային, վերնետքային, վարնետքային), բայց նշված ժամանակահատվածի համար գերակշռում են վերնետքային տիպի մեխանիզմով երկրաշարժերը: Լարվածային ռեժիմը գոտու տարբեր հատվածներում հաշվարկվել է կողաշարժային և վերնետքային տիպի:

**ОСОБЕННОСТИ ПОЛЯ НАПРЯЖЕНИЙ ДЖАВАХЕТСКОГО
ВУЛКАНИЧЕСКОГО НАГОРЬЯ, ОПРЕДЕЛЕННЫЕ ПО
ФОКАЛЬНЫМ МЕХАНИЗМАМ ЗЕМЛЕТРЯСЕНИЙ ЗА ПЕРИОД
2005-2017 ГГ.**

Յ.Յ. Տաակյան

Резюме

Джавахетское вулканическое нагорье, расположенное на Центральном Кавказе, является частью зоны континентальной коллизии Аравии и Евразии. Эта область характеризуется повышенной сейсмической активностью и вулканизмом, где распределение землетрясений рассеянное.

В данном исследовании мы изучаем механизмы очагов землетрясений с использованием цифровых волновых данных, зарегистрированных сейсмическими станциями армянской, грузинской и смежных с ними сейсмических сетей. Мы строим фокальные механизмы для группы землетрясений, произошедших в период 2005–2017гг, с большим уровнем надежности, на основе полярности первого вступления Р-волны. Для получения первоначальных решений фокальных механизмов использовались азимут, угол наклона и полярности Р-фазы. Было проведено также переопределение мест для выбранных сейсмических событий за данный временной период.

Решения плоскости разлома для зарегистрированных землетрясений применялись для определения реальной геометрии разломов, типа разломообразования и режима напряжений на исследованной территории.

Мы объединили все надежно задокументированные фокальные механизмы по десяткам землетрясений с целью изучения текущего состояния напряжений в коре в пределах Джавахетского вулканического нагорья. Землетрясения Джавахетского нагорья характеризуются различной кинематикой (сдвиги, взбросы, сбросы), но для указанного промежутка времени преобладают землетрясения с механизмами взбросового типа. В различных участках зоны существуют разные режимы напряжений – сдвиговые и взбросовые.

**ՏԵԿՏՈՆԱՄԱԳՆԻՍԱԿԱՆ ԴԱՇՏԻ ՕՐԱԿԱՆ ՎԱՐԻԱՑԻԱՆ ԵՎ
ՆՐԱ ԱՆՋԱՏՈՒՄԸ ԵՐԿՐԱՄԱԳՆԻՍԱԿԱՆ ԴԱՇՏԻ
ԱՐԵՎԱՕՐԱՑԻՆ ՎԱՐԻԱՑԻԱՅԻՑ**

© 2018թ. Ս. Ռ. Հովհաննիսյան

*ՀՀ ԱԲՆ Սեյսմիկ պաշտպանության Հյուսիսային ծառայություն
(Գյումրի 0015, Վ. Սարգսյան փող. 5ա Հայաստանի Հանրապետություն)
E-mail: hovsam@mail.ru.*

Հանձնված է հրատարակչություն 05.08.2016թ.

Ցույց է տրված, որ ՀՀ սեյսմաակտիվ տարածքում Երկրամագնիսական դաշտի արևաօրային և տեկտոնամագնիսական վարիացիաները հանդես են գալիս վերադրված ձևով, ինչը խանգարում է թե՛ մեկի և թե՛ մյուսի առանձին-առանձին ուսումնասիրություններին:

Մշակվել է մեթոդ դրանք տարանջատելու համար:

Հանգուցային բառեր. տեկտոնամագնիսական դաշտ, արևաօրային վարիացիաներ, երկրաշարժեր, օրական վարիացիաներ, Արևի ակտիվություն, երկրաշարժերի կանխատեսում:

Հաստատված է, որ Երկրամագնիսական դաշտի (ԵՄԴ) փոփոխական բաղադրիչը հիմնականում պայմանավորված է Արևի ազդեցությամբ, որը դիտարկման ցանկացած կետում հաստատուն չի մնում Երկրի պտույտի և Արևի ակտիվության փոփոխության պատճառով: Օրական պարբերություն ունեցող այդ դաշտը հայտնի է որպես արևաօրային վարիացիա: Մահուն փոփոխությամբ դիտարկվող օրական վարիացիան կոչվում է կայուն (Sq), իսկ նրանից ամպլիտուդահաճախային անկայուն պարամետրերով տարբերվող վարիացիան՝ անկայուն (Sd) (Яновский, 1978): Նշենք, որ անկայուն վարիացիաների պատճառը հանդիսանում են Արևի վրա, ժամանակ առ ժամանակ դիտվող հրվիժակները, որոնց ստեղծած մագնիսական դաշտը Երկիր է հասնում մի քանի օրում, երբեմն ստեղծելով «մագնիսական փոթորիկներ»: Արևաօրային վարիացիայի կայուն կամ անկայուն վարքագծով օրերը նախօրոք որոշվում են Երկրի մագնիսականության և ռադիոալիքների տարածման ինստիտուտում (ИЗМИРАН РФ), որի տվյալների համաձայն մեկ ամսվա ընթացքում կայուն օրերի թիվը տատանվում է 5-10-միջև:

Վերջին 25 տարիներին մեր կողմից կատարվող փոփոխական դաշտի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ համեմատած վերոհիշյալ ինստիտուտի տվյալների հետ, ՀՀ տարածքում, շաբաթվա ընթացքում, ակնհայտորեն մեծ քանակ են կազմում արևաօրային վարիացիայի անկայուն օրերը, որոնք, որպես օրինաչափություն, նախորդում են այն երկրաշարժերին, որոնց օջախներում կուտակված տեկտոնական լարումների ազդեցությունը մեծ է դիտարկման կետում (Оганесян, 2016): Դրան հակառակ փոփոխական մագնիսական դաշտի

արևաօրային հանգիստ վարիացիաների քանակը փաստացիորեն քիչ է և երբեմն էլ նման վարիացիա չի դիտարկվում մեկ տասնօրյակի ընթացքում: Այդ տեսակետից նշենք, որ նկատվում է ապատեղեկատվություն եղանակի տեսության հայկական հեռուստահաղորդումներում, երբ հայտնվում է գեոմագնիսական դաշտի կայունության մասին, այն դեպքում երբ փաստացի այդ օրը դիտարկվել է երկրամագնիսական դաշտի անկայուն վարիացիա:

Տեկտոնամագնիսական դաշտի (TE) օրական վարիացիաների (ST), ամպլիտուդահաճախային բնութագրերը շատ մոտ են (Sq) և (Sd) վարիացիաներին, ինչի հետևանքով վերջիններս հանդիսանում են բնական խանգարումներ TE դաշտի պարամետրերի գնահատման ժամանակ: Բնական խանգարումները չեզոքացնելու նպատակով մինչ այժմ, երկրաշարժերի տեկտոնամագնիսական նախանշաններն անջատելու համար օգտագործվել են երկրամագնիսական դաշտի օրական միջին արժեքները: Սակայն փաստացի նյութի վերլուծությունը ցույց է տալիս, որ TE դաշտի փոփոխման պարբերությունը կարող է տեղավորվել ժամերի մեջ (Оганесян, 2016): Հետևաբար անհրաժեշտություն է դառնում նրա վարքագծի ուսումնասիրությունը օրվա ընթացքում, ինչը հնարավոր է, եթե ունենանք դիտված (SH) վարիացիայից ներքին և արտաքին աղբյուրների ստեղծած վարիացիաները տարանջատելու մեթոդիկա:

Ներկայացվող աշխատանքի նպատակն է ցույց տալ, որ ՀՀ տարածաշրջանում ընդհանուր օրական վարիացիայի մեջ մեծ տեսակարար կշիռ ունեն տեկտոնամագնիսական դաշտի վարիացիաները որոնք կարելի է համապատասխան մեթոդով տարանջատել արևաօրային վարիացիայից:

Վարիացիաների տարանջատման մեթոդը

Երկրի մագնիսական դաշտի փոփոխական բաղադրիչի կազմում դիտարկվող կայուն (Sq) և անկայուն (Sd) վարիացիաները ծնող արտաքին աղբյուրները հիմնականում կազմավորվում են իոնոսֆերայում: Այլ, ներքին աղբյուրներ, որոնք կարող են ստեղծել անկայուն փոփոխություններ արևաօրային վարիացիայի մեջ, ամպլիտուդահաճախային համարժեք պարամետրերով, ինչպիսին դիտվում է Sd վարիացիայի ժամանակ, դեռևս հայտնաբերված չեն:

Սովորաբար օրական վարիացիան ՀՀ տարածաշրջանի տարբեր կետերում դիտարկվում է նույնական տեսքով, անկախ նրա կայուն կամ անկայուն լինելուց: Բացառություն են կազմում այն կետերը, որոնք գտնվում են երկրակեղևի խիստ անհամասեռ էլեկտրահաղորդականությամբ գոտիներում (Оганесян 1990), որտեղ տեկտոնամագնիսական հետազոտությունների համար, որպես կանոն, դիտարկման կետեր չեն ընտրվում, ինչը պահանջվում է ընդունված հրահանգով (Головков В.П., Иванов Н.А., Пудовкин И.М., Шапиро В.А., 1977г.):

Հայաստանի Հանրապետության տարածքում, վերջին 30 տարիներին ԵՄԴ-ի ինդուկցիայի լրիվ վեկտորի մոդուլային չափումներից ստացված տվյալների վերլուծությունը վկայում է այն մասին, որ անկայուն օրական վարիացիան տարվա ընթացքում կրկնվում է ավելի հաճախ, քան իրականում Արևի ակտիվության փոփոխությամբ պայմանավորված անկայուն վարիացիան է, որը արտաքին փոփոխական դաշտի մասին մեր պատկերացումներին չի համապատասխանում: Ինչպես ցույց է տրված (Оганесян, 2016) աշխատանքում փոփոխական մագնիսական դաշտի անկայունությունը, որպես օրինաչափություն, նախորդում է երկրաշարժերին և դրսևորվում օջախների կազմավորման ընթացքում, հատկապես նրանց վերջնափուլերում, անմիջապես նախորդելով երկրաշարժի օրվան, ինչը հիմք է տալիս ենթադրելու, որ դա հավանաբար պայմանավորված է երկրաշարժ կազմավորող օջախում և նրան հարակից երկրակեղևի տարածքներում ընթացող պրոցեսների հետ: Եթե նման ենթադրությունը ճիշտ է, ապա Sq-ի անկայունությունը երկրաշարժից առաջ պետք է, որ կապված լինի տեկտոնամագնիսական դաշտի (TE դաշտի) վարիացիայի (ST) հետ և հետևաբար ԵՄԴ-ի օրական վարիացիան իրենից պետք է ներկայացնի արևի և տեկտոնական լարումների ազդեցության հետևանք: Այսինքն դիտվող վարիացիան՝


$$S_H = S_q + S_T \quad (1)$$

որը փաստորեն ներկայացնում է, այսպես ասած, տեկտոնաարևային օրական վարիացիան: Այս պատճառով էլ Sq վարիացիա արտահայտության փոխարեն տրամաբանական է օգտագործել դիտարկվող S_H վարիացիա արտահայտությունը:

S_H-ից S_T-ն տարանջատելու համար անհրաժեշտ է ունենալ տվյալ սեզոնին, Sq-ին բնորոշ օրական կայուն վարիացիայի էտալոնային կոր: Նման կոր ստանալու հնարավորություն ընձեռնում են երկրաշարժին նախորդող այն օրերը երբ դիտվում է կայուն Sq վարիացիա և կայուն տեկտոնամագնիսական դաշտ (տեկտոնամագնիսական անդորր): Նկ.1-ում ներկայացված են նմանատիպ օրերի 2004թ.-ի ձմեռային սեզոնին և 2005թ.-ի գարնանային սեզոնին բնորոշ Sq-ի կորերը, որոնց սինքրոն արժեքների միջիններով կառուցվել են տվյալ սեզոնի համար էտալոնային կորերը (նկ.1, эталон):


ԵՄԴ-ի օրական դիտվող վարիացիայից՝ S_H-ից հանելով էտալոնային կորի սինքրոն արժեքները կստանանք այն դաշտի վարիացիան, որը պատճառ է դարձել Sq վարիացիայի աղավաղման համար:

Sq վարիացիայի սեզոնային բնորոշ կորեր ստացված են (Հակոբյան, 1975) աշխատանքում, որոնք վերաբերում են փոփոխական դաշտի բաղադրիչներին: Հիմքեր կան ենթադրելու, որ այդ աշխատանքում ներկայացված արևաօրային վարիացիաների ամպլիտուդը ժամանակի ընթացքում պետք է որ փոխված լինի իր մեծությունը, պայմանավորված արևային ակտիվության փոփոխության հետ: Այդ պատճառով Sq-ի և



Նկ.1 Երկրամագնիսական դաշտի կայուն օրերի կորերը ձմեռային, գարնանային սեզոններին և նրանց միջոցով ստացված համապատասխան էտալոնային կորերը:

ՏԴ-ի տարանջատման համար անհրաժեշտ է ունենալ ԵՄԴ-ի լրիվ ինդուկցիայի վեկտորի մոդուլի օրական վարիացիայի էտալոնային կորը կոնկրետ մեր ժամանակների համար: Այդ նպատակով ՏԽ վարիացիայի կորերից սինքրոն ձևով հանելով էտալոնային կորի արժեքները կստանանք տեկտոնամագնիսական դաշտի վարիացիան (նկ.2, ՏԴ կորերը): Ինչպես երևում է 24.12.2004-ին երկրամագնիսական դաշ-



Նկ. 2 Երկրամագնիսական դաշտի արևատայի վարիացիայի աղավաղման օրինակներ:

տի վարիացիան դիտվում է ալիքաձև, որի min-ը ի տարբերություն արևատային վարիացիայի 12:00-ին օրինաչափորեն տեղի ունենալու փոխարեն դիտվում է ժ. 16:00-ին: Ժամանակի մեջ օրական վարիացիայի min-ի նման անոմալ տեղաշարժը երբեք հնարավոր չէ բացատրել արտաքին աղբյուրներով, առավել ևս Արևի ակտիվության փոփո-

խությամբ: Այն բացատրվում է ՏԻ-ի ժ. 9:00-ից մինչև 17:00-ն 24ՆՏ մեծությամբ դիտվող թմբածն փոփոխությամբ:

30.12.2004-ին դիտված դաշտի (ՏԻ) վարիացիան ամբողջապես հակոտնյա է արևաօրային վարիացիայի մասին մեր պատկերացումներին: Ժ. 12:00-ին դիտվող արևաօրային վարիացիայի min-ի փոխարեն դիտվում է maximum, որը ինչպես տեսնում ենք հետևանք է ՏԻ-ի ժ.9:00-18:00-ը դիտված 20 ՆՏ մեծությամբ թմբածն փոփոխության:

04.05.2005-ի օրական վարիացիան աղավաղվել է ՏԻ փոփոխական դաշտի ժ. 9:00-ին սկսված թմբածն փոփոխության պատճառով, որը տևել է մինչև ժ. 18:00-ն, ունենալով 50ՆՏ ամպլիտուդ: Այն ընդհատել է ՏԳ վարիացիայի ուղիղ բևեռացման օրինաչափ անկման գործընթացը, որի հետևանքով էլ ժ. 09:10-ից մինչև ժ. 18:00-ն ՏԻ դաշտում դիտվել է թմբածն փոփոխություն: Ստեղծվում է տպավորություն, որ ՏԻ-ի աճը հանդիսանում է արևաօրային վարիացիայի հակադարձ բևեռացման թևը, որը իր մեծությամբ երկու անգամ գերազանցում է ՏԳ-ի (էտալոնային կորի) ուղիղ բևեռացման թևից:

Առավել մանրամասն վերլուծելու ժամանակ տեսնում ենք, որ ՏԻ դաշտում դիտվող փոփոխությունները թելադրված են ՏԻ փոփոխական դաշտի կողմից: Օրինակ՝ 04.05.2005թ.-ին ՏԻ-ի կորի մոտ ժ.01:55-ին գրանցվել է 5,79 ՆՏ մեծությամբ և 1,5 ժամ տևողությամբ թմբածն վարիացիա, որը ակնհայտորեն հետևանքն է 01ժ.50ր-ին ՏԻ-ում գրանցված 8,64 ՆՏ մեծություն ունեցող թմբածն վարիացիայի:

Առավել ինտենսիվ և խայտաբղետ են տեկտոնամագնիսական դաշտի ազդեցությունները դիտվող օրական վարիացիայի վրա 08.05.2005-ին: Ինչպես տեսնում ենք 0:00 ժ-ից մինչև ժ. 10:00-ն դիտված դաշտը (ՏԻ) և ՏԻ-ն ժամանակի մեջ ընթանում են սինքրոն փոփոխությամբ, որոնք ընդհատվել են ժ. (15:00-18:00)-ը: Այդ ժամանակահատվածում գրանցվել են մի քանի հարյուր ՆՏ-ի հասնող իմպուլսային արժեքներ, որոնք հետևանք են երկրակեղևի էլեկտրամագնիսական դաշտի ինտենսիվ ճառագայթման, ինչը բնորոշ է նախապատրաստված, 4 մագնիսոտուդով և դրանից բարձր օջախներին, սեյսմիկ հարվածից առաջ, նրանց վերջնափուլերում: Համաձայն սեյսմալոգիական կատալոգի (10.05-11.05) 2005 ժամանակահատվածում դիտարկվել է սեյսմիկ անդորր և հետևաբար տեկտոնամագնիսական անդորր, որին հետևել են 4,4 և 5,0 օջախների մագնիսոտուդներով երկրաշարժերը: 08.05.2005թ.-ին տեկտոնամագնիսական դաշտի դինամիկան ոչ միայն աղավաղել է ՏԳ-ի min-ի պահը, այլև տեկտոնամագնիսական դաշտի իմպուլսային բաղադրիչը իր բացարձակ արժեքների մեծությամբ (1000 ՆՏ) քողարկել է ՏԳ-ի արժեքները:

Նկարագրված գործընթացը միանշանակ բացատրվում է տեկտոնամագնիսականության և Ռեյդի տեսություններով (Nagata, 1969; Reid, 1911), որոնց համաձայն, սեյսմիկ հարվածից առաջ, դիտվում է տեկտոնական առաձգական լարումների անհամասեռ անկման պրոցես երկրաշարժի օջախներում և օջախային գոտիներում:

Կորերի ընդհանուր տեսքից (նկ.2) երևում է, որ S_н-ի և S_т-ի մոտ փոփոխություններն ունեն հակառակ նշան, որն արդեն գոյություն ունեցող բազմաթիվ փաստերի հետ (Оганесян, 2016) վկայում է S_т-ի դրական արժեք ունենալու մասին: Այդ բանը շատ ավելի ցայտուն երևում է երբ քննարկում ենք S_н և S_т վարիացիաներն առանձին օրերի համար, որտեղ ընդգծվում են այն բոլոր աղավաղումները, որոնք դիտվում են S_н դաշտում անմիջապես նախորդելով սեյսմիկ իրադարձություններին: Նկարից երևում է, որ S_н-ի կորերը խիստ տարբերվում են ՀՀ աշխարհագրական լայնությանը բնորոշ արևաօրային վարիացիաներից: Բացակայում են արևաօրային վարիացիային բնորոշ min-ի պահերը, կամ էլ տեղաշարժված են ժամանակի մեջ: Չեն առանձնանում ուղիղ և հակադարձ բևեռացման հատվածները, որոնք պարզ երևում են նկ. 1-ում:

Բազմաթիվ նմանատիպ դեպքերից նկ.2-ում ներկայացված չորս տիպային օրինակները ցույց են տալիս, որ տեկտոնամագնիսական դաշտի վարիացիայի պատճառով S_н -ում դիտվող բազմաթիվ օրերի նմանատիպ խիստ անկայուն ամպլիտուդահաճախային բնութագիրը, թույլ չի տալիս սեյսմաակտիվ տարածաշրջանում գրանցել Sq-ի, այդ տարածաշրջանի աշխարհագրական լայնությանը բնորոշ վարիացիան: Եթե այդ աղավաղումներին գումարվում են նաև երկրակեղևի էլեկտրամագնիսական ճառագայթման մագնիսական բաղադրիչի ազդեցությունները, ապա Sq-ի ամբողջական տեսքը ստանալը դառնում է բարդագույն խնդիր: Դա էլ հենց պատճառ է հանդիսանում սեյսմաակտիվ գոտում արևաօրային կայուն վարիացիայի (Sq) օրերի քանակի նվազման համար:

Այսպիսով ակնհայտ է, որ S_н-ի կորի տեսքը թելադրված է TE-ի S_т վարիացիայի վարքագծով: Տարբեր ժամանակներում նմանատիպ բազմաթիվ օրինակներ ցույց են տալիս, որ սեյսմաակտիվ գոտիներում միշտ չէ, որ հնարավոր է գրանցել Sq-ի օրական վարիացիաներն առանց աղավաղումների:

Արված վերլուծությունը ցույց է տալիս, որ Երկրամագնիսական դաշտում դիտվող փոփոխական բաղադրիչը՝ S_н -ը, սեյսմաակտիվ գոտում, մեծամասամբ, հանդիսանում է արտաքին փոփոխական դաշտի՝ Sq-ի և ներքին փոփոխական դաշտի՝ S_т-ի գումարային դաշտը: Չի բացառվում, որ նման օրինաչափությունը բնորոշ կարող է լինել ընդհանրապես բոլոր սեյսմաակտիվ գոտիների համար:

Եզրակացություն

Ամփոփելով այս աշխատանքի վերլուծության արդյունքները կարելի է ասել, որ ՀՀ սեյսմաակտիվ գոտում երկրամագնիսական դաշտի փոփոխական բաղադրիչը, ունենալով օրական պարբերություն, ամբողջությամբ չի ներկայացնում արևաօրային վարիացիան ինչպես ընդունված է մինչ այժմ: Այն հանդիսանում է երկու տարբեր դաշտերի գումար, որոնց աղբյուրները գտնվում են ինչպես իոնոսֆերայում (Sq),

այնպես էլ լիտոսֆերայում (ՏԴ): (1) գումարի մեջ երկրորդ գումարելին իր մեծությամբ համեմատական է առաջինին, իսկ տեկտոնական ակտիվ գործընթացների ժամանակ նաև գերազանցում է նրան: (Տգ)-ի աղավաղումների ամպլիտուդահաճախային բնութագիրը հիմնականում թելադրված է ՏԴ-ի համապատասխան պարամետրերի ակտիվությամբ: Տարբեր ժամանակներում նկ. 2-ում ներկայացվածների նմանատիպ բազմաթիվ օրինակներ ցույց են տալիս, որ սեյսմաակտիվ գոտիներում միշտ չէ որ հնարավոր է գրանցել Տգ-ի օրական վարիացիաներն առանց աղավաղումների:

Առանձին-առանձին վերլուծելով աղավաղված օրերի վարիացիաները նկատում ենք, որ տեկտոնամագնիսական դաշտի կորերի ՏԴ ամպլիտուդները հակառակ կեսօրին դիտվող Տգ ամպլիտուդների մոտերի, ունեն $\max$ արժեքներ ժամը 8:00-ից 20:00-ի սահմաններում, որը ցույց է տալիս նրանց կախվածությունը օրական պարբերությունից:

Քննարկված բազմաթիվ օրինակներ ցույց են տալիս, որ սեյսմիկ հարվածից առաջ ՏԴ դաշտում ընթանում են մեծ ամպլիտուդով նշանափոխ վարիացիաներ, որոնք վերադրվելով Տգ վարիացիային դիտվող ՏԽ վարիացիայի մեջ ստեղծում են անհամասեռ, անկանոն փոփոխություններ:

Դիտվող գումարային փոփոխական դաշտը, ըստ նրա էության, կարելի է անվանել տեկտոնաարևային օրական վարիացիա և նշանակել SqT սիմվոլով:

Այս աշխատանքի գործնական արդյունքը հատկապես կարևոր է բժշկական ծառայություններին երբ անհրաժեշտ է որևէ միջամտություն կատարել հիպերտոնիկ, սիրտանոթային խնդիրներ ունեցող հիվանդների համար: Գեոմագնիսական դաշտի օրական վարիացիայի կայուն, կամ անկայուն իրական պատկերը կնպաստի ճիշտ կողմնորոշվել այդ հիվանդներին համապատասխան օգնություն ցուցաբերելու գործընթացի ժամանակ: Այդ տեսակետից կարիք է զգացվում համապատասխան ծառայություն ձևավորելու, որի կառուցվածքում պետք է համագործակցեն բժիշկներն ու երկրաֆիզիկները:

Ընդհանրացնելով ներկայացված նյութը կարելի է փաստել որ՝

1.Երկրամագնիսական դաշտում դիտվող օրային վարիացիան հանդիսանում է արևաօրային և տեկտոնամագնիսական վարիացիաների գումար:

2.Փոփոխական երկրամագնիսական դաշտի արևաօրային վարիացիան տեկտոնամագնիսական դաշտի օրային վարիացիայից տարանջատելու համար մշակվել է նոր մեթոդիկա:

3.Տեկտոնամագնիսական օրային վարիացիայի կորի ակտիվ մասը սկսվում է 09:00-ին և վերջանում 18:00-ին:

Շարադրվածը գործնականում առավել օգտագործելի դարձնելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել ՏԴ-ի ակտիվության և երկրաշարժերի օջախների պարամետրերի միջև հնարավոր ֆունկցիոնալ

կապը, ինչը թույլ կտա գնահատել վերջիններիս մեծություններն ըստ ST-ի ակտիվության չափի:

Հեղինակը շնորհակալություն է հայտնում Սեյսմիկ պաշտպանության Հյուսիսային ծառայության գլխավոր սեյսմաբան Հ. Վ. Սարգսյանին սեյսմիկ տվյալները սիրահոժար կերպով տրամադրելու համար:

Գրականություն

- Акопян Ц. Г., Ахвердян Л. А.** 1975, Солнечно-суточные вариации и их гармонический анализ по данным магнитной станции «Гярд». Изв.АН АрмССР, Науки о Земле, 4, с.64-71.
- Головков В.П., Иванов Н.А., Пудовкин И.М., Шапиро В.А.** 1977, Инструкция по поискам и изучению аномалий векового хода геомагнитного поля. Москва, с.24.
- Оганесян С. Р.** Тектономагнитный метод прогноза землетрясений. 2016, Изд. Lambert, Saarbrücken, p.432.
- Оганесян С. Р.** Локальные аномалии геомагнитного поля как возможные предвестники землетрясений. 1990, Изд. АН АрмССР, Ереван, с.147-161.
- Яновский Б. М.** Земной магнетизм, 1978, Изд. Ленинградского университета, с.385-386.
- Nagata Т.** Tectonomagnetism Int. Assec., Geomagnetism and Aeronomiya, 1969, Bull. 27, 12.
- Reid H.F.niv. Califor. Publ.Dapt.Geol., 1911, 6, 413.

Գրախոսող՝ Մ. Հովհաննիսյան

СУТОЧНАЯ ВАРИАЦИЯ ТЕКТОНОМАГНИТНОГО ПОЛЯ И ЕЕ ОТДЕЛЕНИЕ ОТ СОЛНЕЧНОСУТОЧНОЙ ВАРИАЦИИ ГЕОМАГНИТНОГО ПОЛЯ

С. Р. Оганесян

Резюме

Показано, что в нашем сейсмоактивном регионе солнечносуточная вариация геомагнитного поля и вариация тектономагнитного поля проявляются суммарно, что мешает их изучению в отдельности. Разработан метод их разделения.


SEPARATION OF TECTONIC MAGNETIC FIELD DAILY VARIATIONS FROM GEOMAGNETIC FIELD SOLAR DAILY VARIATIONS

S.R.Hovhannisyan

Abstract

The article shows that the geomagnetic field solar daily variations and the tectonic magnetic field daily variations appear summarily in our seismically active region, which hinders their study in isolation from one another. A method of their separation is developed.

ԳԻՏԱԿԱՆ ԽՐՈՆԻԿԱ



2017թ. հոկտեմբերի 9-ից 13-ը ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտը կազմակերպել էր «Պերմ-Տրիաս սահմանի կլիմայական, շրջակա միջավայրի և կենսաբազմազանության կտրուկ փոփոխությունները» թեմայով 5-րդ IGCP 630 միջազգային գիտաժողով և դաշտային սեմինար:

Կոնֆերանսին մասնակցել էին 30 գիտնականներ 13 երկրներից: Վայոց ձորի (Օդրին), Զանգակատուն գյուղի (Չանախչի կտրվածք) և Վեդի գետի ավազանում պերմ-տրիաս նստվածքների մերկացման հատվածներում իրականացվել էր դաշտային սեմինար (երեք օր):

Գիտաժողովը նպատակաուղղված էր պերմի ժամանակաշրջանում մասսայական մահացությունների խնդրին, ինչը համարվում է բոլոր ժամանակների ամենամեծ աղետը: Այս իրադարձությամբ է նշագրվում Պերմ և Տրիաս երկրաբանական ժամանակաշրջանների սահմանը (այն բաժանում է նաև Պալեոզոյ և Մեզոզոյ էրատեմաները): Հասակը ըստ 2017թ. Միջազգային խրոնոստրատիգրաֆիական սանդղակի $251,902 \pm 0,024$ մլն տարի է:

Երկիր մոլորակի պատմության ամենախոշոր աղետներից մեկի արդյունքում ծովային տեսակների 96% և ցամաքային ողնաշարավոր կենդանիների 73%-ը ոչնչացել են: Վերացել են միջատների դասի շուրջ 57% ցեղեր և 83% տեսակներ: Ըստ գիտնականների երկրագնդի պատմության Պերմի ժամանակաշրջանում տեղի ունեցած ամենասարսափելի ավերածությունն ըստ երկրաբանական հաշվարկի տևել է «մեկ ակնթարթ»՝ 60 հազար տարի: Մասնագետները ենթադրում են մասսայական ոչնչացման մի շարք հնարավոր պատճառներ, ինչպես օրինակ Սիբիրական պլատֆորմում հրաբխային մեծ ակտիվությունը, մեկ կամ մի քանի խոշոր մետեորիտների անկումը, Երկրի բախումը աստերոիդի հետ, ծովի հատակում մեթանի հանկարծակի հզոր ար-

տանետումը, շրջակա միջավայրի աստիճանաբար փոփոխությունները, Անոքսիա - ծովի ջրի և մթնոլորտի քիմիական կազմի փոփոխություններ՝ մասնավորապես թթվածնի անբավարարություն, կլիմայի փոփոխության հետևանքով օվկիանոսի հոսանքների և/կամ ծովի մակարդակի փոփոխություններ և այլ:

Առավել տարածված է այն վարկածը, ըստ որի աղետի պատճառը եղել է Սիբիրական պլատֆորմում մոտ 260 մլն տարի առաջ, հրաբխային մեծ ակտիվությունը՝ ինչը կարող էր հանգեցնել «հրաբխային ձմռան»՝ ջերմոցային էֆեկտով: Մեմինարի շրջանակներում քննարկվել են Չինաստանից մինչև Եվրոպա նմանատիպ ապարների ուսումնասիրության արդյունքում այս խնդիրների շուրջ ստացված նոր տվյալները:

Ելույթների համառոտ ամփոփումները հասանելի են նշված կայքում:

https://www.researchgate.net/publication/320467445_IGCP630_CONFERENCE_PROGRAM_Armenia

Երկօրյա կոնֆերանսից հետո (9, 10 հոկտեմբեր) դաշտային սեմինար իրականացնելու նպատակով (11, 12, 13 հոկտեմբեր) խումբը մեկնեց Օդբին (Վայոց Ձոր) և Արարատի մարզի Զանգակատուն (Չանախչի կտրվածք) և Վեդի գետի ավազան (Վեդի կտրվածք):

Դաշտային ուղեցույցը հասանելի է նշված կայքում:

https://www.researchgate.net/publication/320426260_The_Permian-Triassic_transition_in_Southern_Armenia

Լ.Սահակյան

ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտ

2018թ. հունվար-մայիս ամիսներին ՀՀ ԳԱԱ ԵԳԻ-ում տեղի են ունեցել գիտական սեմինարներ հետևյալ թեմաներով՝

1. Հունվարի 26-ին «Հանքավայրերի երկրաբանական վտանգների նվազեցումը կենսատեխնոլոգիական և հեռազննման մեթոդներով»

Զեկուցող՝ ԵԳԻ Գեոդինամիկայի և երկրաբանական վտանգների լաբորատորիայի գիտ. աշխատող ***Տ. Լորսաթյան***

2. Մարտի 16-ին «Վիրահայոց-Ղարաբաղի զոնայի յուրայի հասակի մագմատիտների պետրոլոգիան»

Զեկուցող՝ ԵԳԻ Պետրոլոգիայի և իզոտոպային երկրաբանության լաբորատորիայի կրտսեր գիտ. աշխատող ***Լ. Աթայան***

3. Մարտի 22-ին «Գենետիկական երկխոսություն անցյալի հետ»

Զեկուցող՝ ՀՀ ԳԱԱ Մոլեկուլյար կենսաբանության ինստիտուտի առաջատար գիտ. աշխատող, պրոֆ. ***Լ. Եպիսկոպոսյան***

4. Մարտի 29-ին «ՀՀ-ում աղանքների ավտոմատացված մոնիտորինգի համակարգի ծրագրային ապահովումը»

Զեկուցող՝ ԵԳԻ Երկրատեղեկատվական լաբորատորիայի ճարտարագետ ***Ն. Տարսաթյան***

5. Ապրիլի 13-ին «Պալեոսթրատագրական և մորֆոլոգիական ուսումնասիրություններ Փամբակ-Սևան-Սյունիք ակտիվ խզվածքի Քարքար-Ծղուկ փուլ-ափարթում»
Զեկուցող՝ ԵԳԻ Գեոդինամիկայի և երկրաբանական վտանգների լաբորատորիայի կրտսեր գիտ.աշխատող **Մ.Մարտիրոսյան**


6. Մայիսի 17-ին «Զավախքի հրաբխային բարձրավանդակի և հարակից տարածքների սեյսմիկ ռեժիմը և լարվածային դաշտի առանձնահատկությունները»
Զեկուցող՝ ԵԳԻ Գեոարխեոլոգիայի և գեոմոնիտորինգի լաբորատորիայի սեյսմոլոգիական խմբի կրտսեր գիտ.աշխատող **Է.Մահակյան**

Ս.թ. դեկտեմբերի 3-ից մինչև դեկտեմբերի 7-ը ՀՀ ԳԱԱ-ում տեղի կունենա «Մալիտակի երկրաշարժ, 30 տարի անց. փորձ և հեռանկարներ» միջազգային գիտաժողովը՝ նվիրված 1988 թ. աղետալի երկրաշարժին:

Մանրամասները՝ <http://www.geology.am/am/conference>

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐ

ՇԱՎԱՐՇ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԱՄԻՐՅԱՆ (1926-2018)



2018թ. մայիսի 1-ին վախճանվեց ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի առաջատար գիտական աշխատող, երկրաբանա-հանքաբանական գիտությունների դոկտոր, ՀՍՍՀ վաստակավոր երկրաբան, Ռուսաստանի Բնական գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Շավարշ Հովհաննեսի Ամիրյանը:

Շ.Հ. Ամիրյանը ծնվել է 1926թ. ՀԽՍՀ Աշտարակի շրջանի Կարբի գյուղում: 1944թ. ավարտել է միջնակարգ դպրոցը և աշխատանքի նշանակվել Օհանավան գյուղի դպրոցում, որպես ուսուցիչ: Նույն տարում գորակոչվել է Սովետական բանակ և ծառայել մինչև 1950թ.: Բանակում բարեխիղճ ծառայության համար Շ.Հ. Ամիրյանը պարգևատրվել է մարտական և հոբելյանական մեդալներով:

1950թ. Շ.Ամիրյանն ընդունվել է Երևանի պետական համալսարանի երկրաբանական ֆակուլտետ, որը գերազանցությամբ ավարտել է 1956թ.՝ ստանալով ինժեներ-երկրաբան-հետախույզի որակավորում: Նույն թվականին նա աշխատանքի է անցել Երկրաբանական գիտությունների ինստիտուտում՝ հաջորդաբար զբաղեցնելով տեխնիկ-երկրաբանի, կրտսեր, ավագ գիտաշխատողի, Թումանյանի գ/հ բազայի վարիչի (1976-2005), Օգտակար հանածոների լաբորատորիայի վարիչի (1986-2005թթ.), առաջատար գիտ.աշխատողի պաշտոնները:

1962թ. Մոսկվայում Շ.Հ. Ամիրյանը պաշտպանեց իր թեկնածուական ատենախոսությունը, որը նվիրված էր Սոթքի (Ջողի) ոսկու հանքավայրի միներալոգիային, երկրաքիմիային, ծագումնաբանությանը: Նա հայտնաբերեց և ուսումնասիրեց հանքավայրի համար մի շարք նոր, այդ թվում հազվագյուտ միներալներ: Ստացված տվյալները լայնորեն օգտագործվեցին Սոթքի հանքավայրի ուսումնասիրման և արդյունաբերական շահագործման աշխատանքների նախապատրաստման ընթացքում:

Հետագա տարիներին Շ.Հ. Ամիրյանը իրականացրեց Հայաստանի Հանրապետության տարածքի ոսկու հանքավայրերի և երևակումների երկրաբանական կառուցվածքի և նյութական կազմի մանրակրկիտ ուսումնասիրություններ, որոնց արդյունքները հիմք հանդիսացան

նրա դոկտորական ատենախոսության համար (1974թ.): Այդ աշխատությունում առաջին անգամ տրվեց ոսկու հանքավայրերի և երևակումների ֆորմացիոն դասակարգումը, պարզաբանվեց նրանց տեղը մետաղային հանքավայրերի գենետիկական շարքում, քննարկվեցին ոսկու հանքավայրերի հայտնաբերման հեռանկարները Հայաստանի տարածքում, որը բնութագրվեց որպես հեռանկարային ոսկեբեր մարզ:

Շ.Հ. Ամիրյանը հեղինակ և համահեղինակ է շուրջ 160 գիտական աշխատանքների, այդ թվում 5 մենագրությունների, մասնավորապես լայն ճանաչում ստացած «Հայկական ԽՍՀ ոսկու հանքային ֆորմացիաները» (1984թ.):

1976թ. «Հազվագյուտ և ազնիվ տարրերը ՀԽՍՀ հանքային ֆորմացիաներում» մենագրության համար գիտության բնագավառում Շ.Հ. Ամիրյանը համահեղինակների հետ արժանացավ Հայաստանի Պետական մրցանակի: Նրա հետազոտությունների արդյունքները բազմիցս օգտագործվել են արտադրական կազմակերպությունների կողմից՝ նպաստելով ոսկու միներալային բազայի ընդարձակմանը:

Գիտահետազոտական աշխատանքներին զուգընթաց նա զբաղվել է նաև մանկավարժական գործունեությամբ՝ 1976-1977թթ. ԵՊՀ երկրաբանական ֆակուլտետում դասավանդել է «Միներալոգիա» առարկան:

Շ.Հ. Ամիրյանը բազմիցս հանդես է եկել գեկուցումներով միջազգային, համամիութենական, հանրապետական խորհրդակցություններում: Նա ընտրվել է հանքավայրերի ծագումնաբանության Միջազգային ասոցիացիայի անդամ, Ռուսաստանի բնական գիտությունների ակադեմիայի իսկական անդամ:

Երկարամյա արդյունավետ աշխատանքի համար Շ.Հ. Ամիրյանը պարգևատրվել է ՀՀ ԳԱԱ պատվոգրերով (Գովեստագիր, Վաստակագիր): 1985թ. բազմավաստակ և բեղմնավոր գիտաարտադրական գործունեության համար նրան շնորհվեց «ՀԽՍՀ վաստակավոր երկրաբան» պատվավոր կոչումը: Կրթության և գիտության բնագավառներում ներդրած ավանդի համար Շ.Հ. Ամիրյանը 2015թ. պարգևատրվեց «Անանիա Շիրակացի» մեդալով:

Բազմավաստակ, ճանաչված գիտնականի, ազնիվ քաղաքացու և համեստ մարդու՝ Շավարշ Հովհաննեսի Ամիրյանի հիշատակը միշտ վառ կմնա նրան ճանաչողների հիշողություններում:

**ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտ
ՀՀ ԳԱԱ «Գիտություններ Երկրի մասին» տեղեկագրի
խմբագրություն**

Заказ N 876

Подписано к печати 18.07. 2018 г. 4,5 печ. л.
Бумага офсетная N 1. Тираж 150 экз. Цена договорная.
Типография издательства “Гитутюн” НАН РА.
0019, Ереван, пр.Маршала Баграмяна 24.